

Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության 2017թ. գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների իրականացման արդյունքների մասին համառոտ հաշվետվություն

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. գերակա խնդիրների լուծման նպատակով՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունն իրականացրել է հետևյալ աշխատանքները, մասնավորապես, ապահովվել է Հայաստանի Հանրապետության օդային տարածքում 9 հազար 5 հարյուր մետրից բարձր ժամը 00:00-ից մինչև 06:00-ն «Օդային մայրուղիներից ազատ օդային տարածք» (Free Route Airspace) հայեցակարգի ներդրումը: «ԵՎՐԱԿՈՆՏՐՈՆ» կազմակերպության ցանցային կառավարչի հետ կազմակերպվել են հանդիպումներ, որոնց շրջանակներում քննարկվել են Հայեցակարգի ներդրման խնդիրները և տրվել են համապատասխան լուծումներ, ինչպես նաև մշակվել է ՀՀ Աերոնավիգացիոն տեղեկատվական ժողովածուի մեջ հրապարակելու համար Հայեցակարգի ներդրման վերաբերյալ տեղեկատվության նախագիծը: Հայեցակարգը ներդրվել է 2017թ. դեկտեմբերի 7-ից:

Համաձայն Հայեցակարգի՝ ավիաընկերությունները հնարավորություն կունենան ՀՀ օդային տարածք մուտք գործել յուրաքանչյուր սահմանված կետից և չվերթն իրականացնել ազատորեն ընտրված երթուղով, ինչը կարող է կրճատել չվերթների իրականացման ծախսերը՝ Էապես նվազեցնելով վառելիքի ծախսը:

2017թ. հունվարի 21-ից ուժի մեջ է մտել «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2016թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1378 որոշումը, ինչի արդյունքում՝ պարզեցվել և արդիականացվել է տեղական և օտարերկրյա ավիաընկերություններին օդային հաղորդակցությունների իրականացման համար թույլտվությունների տրամադրման գործընթացը. կրճատվել են նախկինում պահանջվող փաստաթղթերի ցանկը և թույլտվությունների տրամադրման ժամկետները, ինչպես նաև ներդրվել է մեկ պատուհանի սկզբունքը:

ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունն ավիաընկերությունների համար բիզնես միջավայրի բարելավման և

ընթացակարգերի պարզեցման նպատակով նախաձեռնել է հայտերի ներկայացման առցանց համակարգի ներդրում:

Համակարգի ներդրման նպատակով հայտարարված մրցույթում հաղթող ճանաչված ընկերության հետ արդեն իսկ մեկնարկել են հայտերի ներկայացման առցանց համակարգի ծրագրային ապահովման մշակման աշխատանքերը:

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՎԻԱՑԻԱՑԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունն (այսուհետ՝ Գլխավոր վարչություն) իր գործունեությունն իրականացնում է տարեկան աշխատանքային ծրագրի համաձայն՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի, Կառավարության, Վարչապետի որոշումներով, կարգադրություններով, հանձնարարականներով և հրահանգներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Հայաստանի Հանրապետության օդային տարածքում 290 թռիչքային մակարդակից (FL290) բարձր՝ ժամը 00:00-ից մինչև 06:00 «Օդային մայրուղիներից ազատ օդային տարածք» (Free Route Airspace) հայեցակարգի ներդրում՝

- Ստեղծվել է աշխատանքային խումբ, որի կազմում ներգրավված են Գլխավոր վարչության և «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության մասնագետները.
- Սահմանվել է աշխատանքների կատարման ժամանակացույց, ինչպես նաև հաստատվել է պատասխանատուների ցանկ.
- Համաձայն ժամանակացույցի աշխատանքային խմբի կողմից մշակվել և հաստատվել է Հայեցակարգի աշխատանքային ծրագիրը.
- Մշակվել և հաստատվել է օդային երթևեկության կազմակերպման կարգավարների ուսուցման պլանը.
- Մշակվել և հաստատվել է օպերատիվ հայեցակարգը.
- Մշակվել է համատեղ հրամանի նախագիծ, որը համաձայնեցվել է շահագրգիռ մարմինների հետ.
- «ԵՎՐԱԿՈՆՏՐՈԼ» կազմակերպության ցանցային կառավարչի հետ կազմակերպվել են հանդիպումներ, որոնց շրջանակներում քննարկվել են վերոգրյալ Հայեցակարգի ներդրման խնդիրները և տրվել են համապատասխան լուծումներ.
- Փորձնական գործարկումների վերջնական արդյունքները վավերացվել են 2017 թվականի հոկտեմբերի 3-ին.
- Մշակվել է Հայաստանի Հանրապետության Աերոնավիգացիոն տեղեկատվական ժողովածուի (այսուհետ՝ Ժողովածու) մեջ հրապարակելու համար Հայեցակարգի ներդրման վերաբերյալ տեղեկատվության նախագիծը, որը Ժողովածուում հրապարակվել է 2017 թվականի հոկտեմբերի 12-ին.

- Հայեցակարգը Հայաստանի Հանրապետության օդային տարածքում գործում է 2017 թվականի դեկտեմբերի 7-ից:
- «ԵՎՐԱԿՈՆՏՐՈՆԼ» կազմակերպության ցանցային կառավարչի հետ կազմակերպվել են հանդիպումներ, որոնց շրջանակներում քննարկվել են Հայեցակարգի ներդրման խնդիրները և տրվել են համապատասխան լուծումներ, ինչպես նաև մշակվել է Հայաստանի Հանրապետության Աերոնավիգացիոն տեղեկատվական ժողովածուի մեջ հրապարակելու համար Հայեցակարգի ներդրման վերաբերյալ տեղեկատվության նախագիծը:
- 2017 թվականի հոկտեմբերի 12-ին Հայաստանի Հանրապետության Աերոնավիգացիոն Տեղեկատվական Ժողովածուի մեջ հրապարակվել է տեղեկատվություն «Հայաստանի Հանրապետության օդային տարածքում 290 թռիչքային մակարդակից (FL290) բարձր ժամը 00:00-ից մինչև 06:00 «Օդային մայրուղիներից ազատ օդային տարածք» (Free Route Airspace)» հայեցակարգի ներդրման վերաբերյալ: Վերոգրյալ հայեցակարգը 2017 թվականի դեկտեմբերի 7-ից ներդրվել է Հայաստանի Հանրապետության օդային տարածքում:

2. Տեղական և օտարերկրյա ավիաընկերություններին օդային հաղորդակցությունների իրականացման համար թույլտվությունների տրամադրման ընթացակարգերի պարզեցում՝ հայտերի ներկայացման առցանց համակարգի ներդրման միջոցով

- 2017 թվականի հունվարի 21-ից ուժի մեջ է մտել «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1378 որոշումը, ինչի արդյունքում՝ պարզեցվել և արդիականացվել է տեղական և օտարերկրյա ավիաընկերություններին օդային հաղորդակցությունների իրականացման համար թույլտվությունների տրամադրման գործընթացը. կրճատվել են նախկինում պահանջվող փաստաթղթերի ցանկը և թույլտվությունների տրամադրման ժամկետները, ինչպես նաև ներդրվել է մեկ պատուհանի սկզբունքը:
- Գլխավոր վարչությունը ավիաընկերությունների համար բիզնես միջավայրի բարելավման և ընթացակարգերի պարզեցման նպատակով նախաձեռնել է հայտերի ներկայացման առցանց համակարգի ներդրում: Նշված համակարգի ներդրման աշխատանքների ֆինանսավորման նպատակով բանակցություններ են վարվել Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային Զարգացման Գործակալության (այսուհետ՝ ԱՄՆ ՄԶԳ) հետ:
- Արդյունքում՝ 2017 թվականի սեպտեմբերի 8-ին Գլխավոր վարչության և ԱՄՆ ՄԶԳ միջև կնքվել է Փոխըմբռնման հուշագիր:
- Հայտերի ներկայացման առցանց համակարգի ծրագրային ապահովումն իրականացնելու նպատակով Գլխավոր վարչության կողմից պատրաստվել է համապատասխան տեխնիկական առաջադրանք և ԱՄՆ ՄԶԳ կողմից հայտարարվել է մրցույթ, որում հաղթող է ճանաչվել «Պրիոտիքս» ընկերությունը:

- Մեկնարկել են հայտերի ներկայացման առցանց համակարգի ծրագրային ապահովման մշակման աշխատանքերը, որում ընդգրկված է նաև Գլխավոր վարչության աշխատակազմի օդային փոխադրումների կարգավորման վարչությունը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների 67-րդ կետի կատարումն ապահովելու համար Գլխավոր վարչության կողմից մշակվել է «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ), որը 2017 դեկտեմբերի 18-ին սահմանված կարգով ներկայացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը:

Նախագծի մշակումը պայմանավորված է 2015 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և ավիացիայի բնագավառի Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերում կատարված փոփոխություններին «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը համապատասխանեցնելու, ինչպես նաև նույն Օրենքում մի շարք ընթացակարգային կարգավորումներ հստակեցնելու անհրաժեշտությամբ, մասնավորապես Նախագծով՝

➤ հստակեցվել են ավիացիայի բնագավառի լիազորված մարմինները և նրանց լիազորությունները, ինչպես նաև Չիկագոյի կոնվենցիայի N 13 հավելվածի փոփոխություններով պայմանավորված՝ պատահարների և լուրջ միջադեպերի մասնագիտական քննության լիազորված մարմնի գործառույթները, քննության ընթացքում ձեռք բերված տեղեկատվության գաղտնիության և հրապարակման դեպքերն ու առանձնահատկությունները.

➤ հստակեցվել են փոքր ավիացիայի տարատեսակները և փոքր ավիացիայում օգտագործվող որոշ օդանավերի կարգավորման առանձնահատկությունները.

➤ ներքին չվերթների խրախուսման նպատակով պարզեցվել են ներքին օդանավակայանների սերտիֆիկացման ընթացակարգերը՝ մասնավորապես՝ ուղևորների և բեռների փոխադրումների ծավալներով պայմանավորված՝ ներքին օդանավակայանների աերոդրոմները և (կամ) ուղղաթիռադաշտերը կարող են շահագործվել սերտիֆիկատի կամ թույլտվության հիման վրա, որը դրական անդրադարձ կունենա գործարար միջավայրի բարելավման վրա.

➤ արդյունավետ վերահսկողության (effective control) լիարժեք իրականացման ապահովման նպատակով՝ հստակեցվել է օդանավ շահագործող կազմակերպությունների մասնակիցների (բաժնետերերի, փայատերերի և այլն) մասնակցության վերաբերյալ որոշիչ առանձնահատկությունները (*Օդանավ շահագործողի վկայականը տրվում է Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց, որոնց բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայաբաժնի և այլն) առնվազն 51 տոկոսը սեփականության իրավունքով*

պատկանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին և (կամ) Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց, որոնց կառավարմանն առնչվող հարցերի վերաբերյալ որոշիչ ձայների իրավունքը յուրաքանչյուր դեպքում պատկանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին:»

➤ հստակեցվել է Գլխավոր վարչության կողմից տրամադրվող թույլտվությունների, վկայականների, սերտիֆիկատների գործողության կասեցման հիմքերը, մասնավորապես այլ անձանց կյանքի, առողջության կամ սեփականության, պետության անվտանգության կամ առանձնապես կարևոր հանրային շահերի պաշտպանության համար ծանր հետևանքների վերացման կամ դրանց առաջացումից խուսափելու անհրաժեշտությունից ելնելով լիազորված մարմինը՝ Գլխավոր վարչությունը, կարող է վերը նշված փաստաթղթերի գործողությունը կասեցնել:

➤ Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿՍՕ) 38-րդ Ասամբլեայի արդյունքում Չիկագոյի կոնվենցիայի 17-րդ հավելվածում կատարվել են մեծածավալ փոփոխություններ, որոնք ենթակա են Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ տեղայնացման և կիրառման: Հաշվի առնելով նշվածը՝ Օրենքի 52-րդ՝ ավիացիոն անվտանգության հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ, որով.

- հստակեցվել են Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ավիացիոն անվտանգության ապահովման համար նախատեսված գնման տեխնիկական սարքավորումների, մուտքերի հսկողության ծրագրային համակարգերի, տեսահսկման և պահպանության ազդանշանային համակարգերի ընտրության չափանիշները,

- հստակեցվել են անօրիանական միջամտության դեպքերում պետական կառավարման մարմինների գործողությունները,

- սահմանվել է, որ ավիացիոն անվտանգության ապահովման նպատակով լիազորված մարմնի կամ համապատասխան իրավապահ մարմինների պահանջով Հայաստանի Հանրապետությունից և դեպի Հայաստանի Հանրապետություն թռիչքներ իրականացնող Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա օդանավ շահագործողների կողմից պետք է տրամադրվեն տվյալ չվերթի ուղևորների վերաբերյալ նախնական և/կամ ամփոփ տեղեկատվություն:

«Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը Գլխավոր վարչության 2017 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1.1/10.1/2606-17 գրությամբ օրենքով սահմանված կարգով ներկայացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N122-Ն որոշմամբ հաստատված հավելված N1-ի 63-րդ և 64-րդ կետերի՝ Գլխավոր

վարչությունում մշակվել են «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 2-ի N 1307-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 17-ի N843-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծերը և դրվել են շրջանառության մեջ:

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ազգային ծրագրի մասին» N1307-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծով առաջարկվել են մի շարք փոփոխություններ և լրացումներ, որոնք վերաբերվում են օդանավակայանների և ավիաընկերությունների անվտանգության ծրագրերին, Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում իրականացվող որակի հսկողության միջոցառումներին, անկարգապահ, կարգազանց ուղևորների հետ վարվելու կարգին, քաղաքացիական ավիացիայի համակարգում օգտագործվող ծրագրային համակարգերը հնարավոր կիրեն-վտանգներից պաշտպանությանը, օդանավակայաններում ներդրվող և օգտագործվող տեխնիկական սարքավորումներին վերաբերվող չափանիշներին, ինչպես նաև տեղայնացվել են ավիացիոն անվտանգության մասով ԻԿԱՕ կողմից սահմանված նոր հասկացությունները:

Առաջարկվող փոփոխությունները հնարավորություն կտան համապատասխանեցնելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի համակարգում կիրառվող ավիացիոն անվտանգության միջոցառումները ԻԿԱՕ պահանջներին և կնպաստեն համակարգում ավիացիոն անվտանգության ապահովման մակարդակի բարձրացմանը:

Գլխավոր վարչության կողմից «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 2-ի N 1307-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը սահմանված ժամկետում՝ 28.11.2017թ. N1.1/5.1/2406-17 գրությամբ ներկայացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 17-ի «Քաղաքացիական ավիացիայի օդանավերով ուղևորների կողմից գենքի և փամփուշտների

փոխադրման կանոնները հաստատելու մասին» N843-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մշակման հիմք է հանդիսացել «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև ծառայողական ու քաղաքացիական զենքը տեղափոխելու մասին» Համաձայնագրի պահանջները, որի դրույթներով սահմանվել են Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵՏՄ) անդամ պետությունների միջև ծառայողական ու քաղաքացիական զենքը տեղափոխելու կանոնները, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության օդանավակայաններից և դեպի Հայաստանի Հանրապետության օդանավակայաններ ԵՏՄ անդամ երկրների օդանավակայաններից ուղևորների կողմից զենքի փոխադրման աշխատանքների կանոնակարգման անհրաժեշտությունով:

Գլխավոր վարչության կողմից «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 17-ի N843-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը սահմանված ժամկետում ներկայացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը, որը ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 3-ի N919-Ն որոշմամբ:

ՏԵՂԵԿԱՆՔ
2017 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Գերակա խնդիրները	Գերակա խնդիրների կատարմանն ուղղված քայլերը
1	2	3	4
<p>Հայաստանի Հանրապետության կավարությանն առնթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն</p>	<p>50</p>	<p>Հայաստանի Հանրապետության օդային տարածքում 290 թռիչքային մակարդակից (FL290) բարձր ժամը 00:00-ից մինչև 06:00 «Օդային մայրուղիներից ազատ օդային տարածք» (Free Route Airspace) հայեցակարգի ներդրում</p>	<p>1. Ստեղծվել է աշխատանքային խումբ, որի կազմում ներգրավվել են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առնթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության և «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության մասնագետներ:</p> <p>2. Սահմանվել է աշխատանքների կատարման ժամանակացույց, ինչպես նաև հաստատվել է պատասխանատուների ցանկը:</p> <p>3. Համաձայն ժամանակացույցի աշխատանքային խմբի կողմից մշակվել և հաստատվել է ARMFRA հայեցակարգի աշխատանքային ծրագիրը:</p> <p>4. Կազմակերպվել է աշխատանքային հանդիպում «ԵՎՐԱԿՈՆՏՐՈՒԼ» կազմակերպության և աշխատանքային խմբի մասնագետների միջև, որի ընթացքում քննարկվել են վերոնշյալ ծրագրի ներդրման դրույթները, ռազմավարությունը և հնարավոր խոչընդոտները:</p> <p>5. Մշակվել և հաստատվել է ՕԵԿ կարգավարների ուսուցման պլանը:</p> <p>6. Մշակվել և հաստատվել է օպերատիվ հայեցակարգը:</p> <p>7. Մշակվել է համատեղ հրամանի նախագիծ և համաձայնեցման է ներկայացվել շահագրգիռ մարմիններին:</p> <p>8. Մշակվել է Հայեցակարգի ներդրման վերաբերյալ տեղեկատվության նախագիծ ՀՀ Աերոնավիգացիոն տեղեկատվական ժողովածուում հրապարակելու համար:</p>

<p>ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն</p>	<p>76 Տեղական և օտարերկրյա ավիաընկերություններին օդային հաղորդակցությունների իրականացման համար թույլտվությունների տրամադրման ընթացակարգերի պարզեցում՝ հայտերի ներկայացման առցանց համակարգի ներդրման միջոցով</p>	<ul style="list-style-type: none"> • 2017 թվականի հունվարի 21-ից ուժի մեջ է մտել «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1378 որոշումը, ինչի արդյունքում՝ պարզեցվել և արդիականացվել է տեղական և օտարերկրյա ավիաընկերություններին օդային հաղորդակցությունների իրականացման համար թույլտվությունների տրամադրման գործընթացը. կրճատվել են նախկինում պահանջվող փաստաթղթերի ցանկը և թույլտվությունների տրամադրման ժամկետները, ինչպես նաև ներդրվել է մեկ պատուհանի սկզբունքը: • ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը ավիաընկերությունների համար բիզնես միջավայրի բարելավման և ընթացակարգերի պարզեցման նպատակով նախաձեռնել է հայտերի ներկայացման առցանց համակարգի ներդրում: Նշված համակարգի ներդրման աշխատանքների ֆինանսավորման նպատակով բանակցություններ են վարվել Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային Զարգացման Գործակալության (այսուհետ՝ ԱՄՆ ՄԶԳ) հետ: • Արդյունքում՝ 2017 թվականի սեպտեմբերի 8-ին ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության և ԱՄՆ ՄԶԳ միջև կնքվել է Փոխըմբռնման հուշագիր: • Հայտերի ներկայացման առցանց համակարգի ծրագրային ապահովումն իրականացնելու
---	---	--

նպատակով ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից պատրաստվել է համապատասխան տեխնիկական առաջադրանք և ԱՄՆ ՄՁԳ կողմից հայտարարվել է մրցույթ, որում հաղթող է ճանաչվել «Պրիոտիքս» ընկերությունը:

- Մեկնարկել են հայտերի ներկայացման առցանց համակարգի ծրագրային ապովման մշակման աշխատանքերը, որում ընդգրկված է նաև ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության աշխատակազմի օդային փոխադրումների կարգավորման վարչությունը:

ՏԵՂԵԿԱՆՔ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների կատարման արդյունքները
1	2	3	4
ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն	67.	«Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարել ու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	«Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության 2017 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1.1/10.1/2606-17 գրությամբ սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը: